ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Հուլիսի 25-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետն ընդունել է 36 քաղաքացու: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեսուն, աշխատանքի տեղավորման՝ երեք, առողջարանային ուղեգիր հատկացնելու, նպաստի վերականգնման և հարևանի ապօրինի շինարարության հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից քսանինին տրվել է դրական լուծում, մեկ դիմում ուսումնասիրման փուլում է: Աշխատանքի ընդունվելու մասին դիմած երեք քաղաքացիները վերցվել են հաշվառման: Ընթացք է տրվել առողջարանային ուղեգիր հատկացնելու մասին դիմումին, մերժվել է նպաստի վերականգնման վերաբերյալ դիմումը:

Մարզպետի հանձնարարությամբ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում ուսումնասիրվում է հարևանի կողմից ապօրինի շինարարության վերաբերյալ դիմումը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ